

Մարզպետարանն ղիմած քաղաքացիների ղիմումների.

բողոքների 2014թ.-ի ամփոփագիր

2014թ-ի ընթացքում ստացվել է 1120 ղիմում:

ա/ Դրամական օգնություն է խնդրել 820 քաղաքացի: Դրական պատասխան է ստացել 803-ը, մերժվել՝ 6-ը, ընթացքի մեջ է 11 ղիմում: /Դրամական օգնության ղիմումները մերժվել են հիմնականում կրկնակի լինելու կամ ընթացիկ եռամսյակում օգնություն ստացած լինելու հիմքով/:

բ/ Բնակարանային և քաղաքաշինական հարցերով ղիմել է 49 քաղաքացի, որից 25-ի խնդրանքը բավարարվել է, 12-ինը՝ մերժվել, 12 ղիմում ընթացքի մեջ է: /Բնակարանային պահանջի ղիմումները մերժվել են մարզպետարանի իրավասությունից դուրս լինելու պատճառով/:

գ/ Առողջապահական բնույթի 95 ղիմումից դրական պատասխան է ստացել 85-ը, մերժվել է՝ 7-ը, 3 ղիմում ընթացքի մեջ է: /Առողջապահական հարցերով ղիմած քաղաքացիները մերժվել են պետ. պատվերի և առողջարանային ուղեգրերի սահմանափակ լինելու պատճառով/:

դ/ Աշխատանքի հարցերով ղիմած 29 քաղաքացիներից 12-ի պահանջին դրական ընթացք է տրվել, 11 ղիմում մերժվել է, 6-ը ընթացքի մեջ է /ղիմումները մերժվել են աշխատատեղ չլինելու պատճառով/:

ե/ Գյուղատնտեսական հարցերով ղիմած 12 քաղաքացիներից 11-ը ստացել են դրական պատասխան, 1 ղիմում ընթացքի մեջ է:

զ/ Կրթության և մանկական հիմնարկներին առնչվող հարցերով ղիմել է 40 քաղաքացի և բոլորն էլ ստացել են դրական պատասխան:

է/ հողաշինության հարցերով ղիմած 24 քաղաքացիներից 19-ը ստացել են դրական պատասխան, 5 ղիմում ընթացքի մեջ է:

ը/ Որդեգրման, մանկատնից երեխային վերադարձնելու և ներառական կրթության վկայագիր տրամադրելու հարցերով ղիմել է 49 քաղաքացի և ստացել դրական պատասխան:

թ/ Այլ բնույթի 2 ղիմում է հաշվառման վերցված, որին տրվել է դրական պատասխան:

ժ/ Մեփականաշնորհման բնույթի ղիմումներ ներկայացրած քաղաքացիներին առաջարկվել է ղիմել նատարան:

Փ. Ղազարյան

մարզպետարանի աշխատակազմի

քարտուղարության ընդհանուր բաժնի պետ